

երջանիկ մայրդ կու գայ կը լրտեսէ, ա- նոր գործն է: Կէս գիշեր կը զարնէ, մէկ ժամ, երկու ժամ, ամեն բան քնոյ մէջ ընկղմած է. ինքը միշտ կը հսկէ: Գիտէ որ եթէ քեզի պէս ինքն ալ քուն ըլլայ, ալ քեզի արթննալ չկայ:

Կը շարունակուի:

### ԼՈՆՏՐԱ.

Անկոյ-Սաքսոն ցեղին հնարքներուն մեծոքիւնը և գորոքիւնը:

Սաքսոններուն բարուց մէջ երկու յատկութիւնք աւելի աչքիս կը զար- նեն. Մեծութիւն և Զօրութիւն: Այս երկու յատկութիւնները իրենց ամեն գործոցը վրայ դրոշմած են, և մասնա-ւոր կերպով իրենց քաղաքաց ձևոյն վրայ: Աչքդ մէյմը Լոնտրայի վրայ դար- ձուր, այն քաղքին՝ որ միշտ կը դադրի և նորէն կը սկսի. Նիակարայի ջրվէժն, այս մարդկային մակընթացութենէն, Լոնտրայի ժողովրդենէն, աւելի քիչ աղմուկ և ծուխ կը հանէ և նուազ ա- լիք ունի:

Մ'անաւանդ նոյեմբերի մէջ յաճա- խած միդապատ օր մը տեսնելու է այս մեծայալթ նորասքանչ և աշխարհիս մէջ առաջին քաղաքը: Խարտեաչ մէզն ալ աւելի կը թանձրանայ ծուխի հեղեղ- ներով, զոր կը ծխեն երկինք բարձրա- ցեալ աղիւսեայ մեծամեծ խողովակ- ներն, ճարտարարուեստից հազարաւոր փուռերն, գործարանաց և տանց ծխան- ներն: Եթէ ժամացոյցդ նայիս՝ առաւօ- տեան ժամն տասնութէկն է, իսկ եթէ երկինքը նայիս դեռ գիշեր է: Կազերուն կտուցներն կը վառին, Սգրէնտ փողո- ցին կրպակներն լուսաւորուած են. արք և տղայք, սատանայի պէս սեք, ձեռքերնին շահեր կը կրեն, մինչև ձիե- րուն ոտից տակ. բայց ինչ օգուտ, լոյսն ուրիշ բանի չիժառայեր՝ բայց եթէ միգին կապարեայ գոյնը աւելի դուրս ցատքեցընելու: Եւ սակայն այս

սահուն ամպին մէջ, այն ցորեկուան խաւարին մէջ, կ'երթան կու գան, կը դառնան, մէկմէկու ճամբան կը կտրեն, անվիշտ, բազմահոգ և լուռ դիմօք մար- դիկ, ոմանք հարուստ հագուստներով և այլք խեղճ ցնցոտեօք: Կարծես թէ գե- րեզմանի մէջ շարժող շուքեր են:

Սակայն կրնամ դքեզ ապահովյը- նել որ անոնց գործունէութեան նպա- տակն ալ աւելի ցնորակերպ բաներ են: Իւրաքանչիւր ոք ըստ իր գաղափարաց կամ զբաղանաց՝ Լոնտրայի մէջ տար- բեր քաղաք մը կը փնտռէ: Պ. Բողչիլտ աշխարհիս ամբողջ դրամասեղանք հոն կը փնտռէ. վաճառականն՝ գործոց ա- մենէն մեծ թատրոնը. անասնաբոյժն՝ արջառոց համար ընդարձակ վաճառա- նոց մը. տէրութեան մարդն՝ կառավա- րութեան աթոռը և վարչութեան դա- նազան ճիւղերը. զուարճասէրն՝ տեսա- բանաց յայտարարութիւնները կամ կապելայից դուռը. իսկ արուեստաւորն այս ամեն բանս ալ կը փնտռէ և կը գտնայ հոն: Ով որ ամբօխներու և ընդ- արձակ քաղաքաց տեսքը կը սիրէ՝ յօ- ժարութեամբ ճամբորդաց կը թողու անապատը. Լոնտրայի մէջ մարդկային անտառաց կը հանդիպի, ուր դիտողու- թեան նիւթերն՝ մեծութեամբ՝ բնու- թեան զարմանալի տեսարանաց կը հա- լասարին: Մարդ տեսակ մը զմայլմունք և զլխապտոյտ կը զգայ՝ մարդկային կե- նաց բոլոր այս կերպարանքները նկա- տելով, որոնց զանազանութիւնն ան- հատնում է: Դարձեալ եթէ հոգնիս ա- ռուտուր ընող ժողովուրդ մը տեսնա- լէն, մեքենայից անիւներուն դղրդելէն, ձիերէ, շոգեշարժից և կառաց մշտնջե- նաւոր աղմուկէն, որոնք նոյն իսկ Լոնտ- րայի փողոցներու մէջ սուլելով զլսուղ վրայէն կ'անցնին, քայլ մըն ալ ա՛ռ և այն խառնիճաղանճին ցամաք միայնու- թեան մէջ կը գտնաս ովասիս մը:

Ամառ իրիկուն մը Հայտ-Փարքի մէջ էի. չորս կողմն ամենայն ինչ լուռ էր, բաց 'ի թռչուններէն. կովերը հոն կ'ա- բաժէին, հին և մեծ ծառեր՝ հովու տուած կը տատանէին իրենց թարչա-

մեալ տերևները, տղայք կը խաղային և օձային ըսուած ջրոյ լճակին մէջ կը լողային: Այն ընդարձակ հորիզոնին մէջ, որուն տեսքին վերջին սահման՝ կանաչ գծեր և կապուտ երկինքն էին, ես զիս մայրաքաղաքէն 100 փարսախ հեռու կը կարծէի, և սակայն Լոնտրայի մէջ էի: Բայց ըստ իմ կարծեացս Լոնտրայի ամենէն հանդիսաւոր տեսարանն է՝ շոգենաւու ընթացքով տեսնուածն: Առանց մեծ գետի մեծ քաղաք մը չըլլար, ըստ իմ կարծեացս. գետն է անոր վաճառականութեան կենսական շնչերակը: Թամիզ գետն ալ անգղիացի բնութիւն ունի, դալկահար է, խորին, աշխատասէր և զօրաւոր. զանազան բանաստեղծական անուամբք հարիւրաւոր շոգենաներ կը կրէ իր վրայ: Յաւերժանարսն, Գրիսոյ, Պարճանք Լոնտրայի, Ծիճաւնուշկ, Արսագիյ, Արևաճաղիկ և Զիս մի մուռնար. որոնք հասարակաց կառաց և նաւաց պաշտօնը կատարելով՝ քաղաքին մէկ ծայրէն մէկալ ծայրը կ'երթան. այս նաւերու վրայ կենալով՝ Լոնտրայի կամուրջները և շինուածքները տեսնալու է, Ռեստմինիսգրի եկեղեցին, Սուրբ Պօլոսը, Սըմըրսէդհաուս, և ամեն ձևով զանգակատունները, որոնք հեռուէն ճիւղաց պէս մէջէ մէջ կու բարձրանան, և ամենէն աւելի հին երդիքներու (Wharf) շղթաներով անկիւնաւոր առիքները, որոնք զօրութեամբ բոլոր աշխարհիս մեծագանգուած և անձանօթ հարստութիւններ կը վերցընեն:

Այս զօրութեան և մեծութեան տըպաւորութիւնը բոլոր Սաքսոններէ կանգնուած պլիսաւոր քաղաքներուն վրայ կը տեսնուին, ինչպէս նաև ճարտարարուեստից հնարքներու մէջ: Սաքսոն հանճարը բոլոր իր գործոցը մէջ հսկայածև բան մը կը ցուցընէ: Թաղթուած դժուարութիւնը կը սիրէ. իր բոլոր մեծութիւնը դժուարին գործերը յաղթելու մէջ կը դնէ: Վերջերս Քլըմսգիտի ճահճին մէջ՝ չտեսնուած ուրմիկէնի (mortier) փորձի մը ներկայ գտնուեցայ, որուն ընդունակութիւնը 56 անգղիա-

կան բթաչափ է. որոտման ձայնով և մեծ հեռաւորութեամբ՝ ինչուան չորս մղոն սոսկալի ումբեր կը նետէ, որոնք այնչափ խոր գետնին մէջ կը մխուին, որ օրերով աշխատելու է զանոնք գրանելու, եթէ գտնուին. ասոր անունը Լորտ Բալմերսդըն գրած են: Բայց Սաքսոն ազգին հակամիտութիւնն ծովային գործոց վրայ կը փայլի: Մեծն Բրիտանիա ինքնին նաւու ձևով կը ներկայանայ:

Երբ 1856ին Հոլանտայէն Անգղիա եկայ գիշերանց, շոգենաւով Թամիզի բերնէն ներս մտայ: Ամբողջ վաճառական նաւատորմի դմբխարիսնետած կը քնանար, և լուսնոյ լուսով իր պարանները, իր հանդերձանքն ու կայմերը կը ցուցընէր, ուսկից աստղերու պէս վառուած պզտիկ կանթեղներ կը կախուէին: Որչափ որ գետին մէջ դէպ 'ի վեր երթաս և Լոնտրայի մօտենաս՝ իր նաւերուն բազմութիւնը կ'աճի և կը սեղմուի. յիրաւի բարձրաբերձ ծառերու անտառ մը կը ձևացընեն, որոնց բովանդակութիւնն գետը շուքով կը ծածկէ, կը խափանէ, և անցուղարձի նեղ անցք մը կը թողու: Մեծն Բրիտանիա գոգցես ճամբորդին երևակայութիւնը յափշտակել կ'ուզէ, ըսելով. « Տես, ես եմ գլխոյ շուրջ »: Շատ քաղաքներէ անցեր էինք՝ որոնք գիշերուան միատարր ենթակային վրայ կազերու լուսով կը նշմարուէին, որ առատութեամբ ինչուան գեղերու մէջ ալ կը զեղու հոս: Կրէվզէնտ, Վուլիչ, Կրենիչ՝ երեցեր և երազի մը պէս աներևոյթ եղեր էին: Արդէն առաւօտեան ժամը ութ էր, և օրը ծագեր էր, որչափ որ կրնայ ծագիլ փետրուարին մէջ Թամիզի վրայ: Արեգակն՝ բամբակի մէջ պլլուած հին լուի ոսկիի մը կը նմանէր, և Լոնտրան ինքը զինքը ամպերու մէջ կանգնուած քաղաքի մը պէս կը ներկայացընէր հօրիզոնին: Միլվոյի զիմաց հասեր էինք, երբ մէկէն 'ի մէկ ինծի հետ կամուրջի վրայ գտնուող անցողաց նայուածքն գետին ալ կողմը դարձաւ. հոն աշխատութեան մթերանոցի մը վրայ կիսաչէն

նաև մը մեծատարր զանգուածն պառկած էր, որուն վանդակակերպ կողերն և ատաղձն նախա ջրհեղեղեան կէտ ձկան մը աւազի վրայ զարնուած կմախից կը նմանէին : Քովս կեցողներէն մէկն ըսաւ, « Դա է Մեծ Արևելեանն » Great-Eastern.

ԱՓՈՏ ԵՍԿԻՐՈՍ

ՊՐԱՀՄԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴԸ

(Տես երես 303)

Որչափ որ Պարսկաստանի երկիրնե-րը կը մօտենար, քաղաքները մեծաւ մասամբ իրեն անապատ կը տեսնուէին և դաշտերը մերկացած : Կար շռայլութիւն մը առանց արգասեաց, և պաճուճանք առանց առատութեան : Մակայն Պարսիկք երկիւղած և ներողամիտ երևցան Պրահմանին, թէպէտ և վեհանձնութիւն չունէին՝ բայց գիտէին իրենց ամենայն գործը շնորհալից կերպով ընել : Նարա-Մունի ըսաւ ինքն իրեն. « Խօսքերնուն չեմ վստահիր, և ոչինչ նուազ չեմ ախորժիր իրենց կենցաղավարութիւնը՝ որ արուեստական կերպ մ'ունի . միայն այն ատեն ստոյգ կատարելութիւն կրնայ սեպուիլ երբ սըրտի անկեղծութենէ առաջ դայ » :

Ծեր մոլլա մը որ Հնդկաստանէն ծանօթացեր էր, շատ մը առածներ արտաբերեց իրեն, որոնց մեծ դժուարութեամբ կրցաւ ընտրութիւն մը ընել : Ահաւասիկ այն ինն հատ որոշածները՝ որք այս ժողովուրդը զուարճութեան բարեկամ, մասնաւորապէս հիւրընկալութեան մէջ առաքինի նկարագրող երևցուցին իրեն :

Քաղաքավարութիւնն որոշեալ գրամ մըն է որ կը հարբատացնէ թէ ընդունողը և թէ վճարողը : Մարդ մը մինչքեռ գիտութիւնը կը փնտռէ ի մաստուն կրնայ ըսուիլ, բայց անմիա է եթէ կարծելու ըլլայ թէ գտած է :

Տգիտութիւնը յոռի երիվար մ'է, որ վար կը զըրէ ով որ վրան հեծնայ, և իր առաջնորդը ծողրել կու տայ :

Առատաձեռն մարդուն պարզեր ճմարիտ ընծայ մ'է, շահասէր մարդունը ինդրուածք :

Ողորմութիւնը հարստութեանց ազն է, առանց անոր կ'ապականի : Երկու բաներ անբաժանելի են ստախոսութենէ, շատ խոստմունք և շատ ջատագովութիւնք : Աւազ այն ազգին՝ որոյ երիտասարգք ծերութեան մոլութիւններ կ'երևցնեն վրանին, և ծերերը կը պահեն դեռ երիտասարգութեան ամենայն անկարգութիւնները :

Մակայն հոգւոյ ամենայն ազնուութեամբը զարդարուած ժողովրդեան մը այն հանճարեղ առածներուն մէջ կային երկու հատ՝ որ ինչուան իր սիրտը ազդեցին, յիշեցնելով անոր բնութեան ամենէն պատկառելի յիշատակները և առաքինութեան ամենէն աւելի քաղցր պատուիրանը : Մէկը, ըսաւ ինքն իրեն, բարի և զիտուն Բարվաթին է, որ կը քննէ բոլոր բնութեան առարկաները, իր մտածութիւնը դէպ ի Աստուած բարձրացընելու համար . միւսն իր ազնիւ հայրն է, որ կը հրաւիրէ զամեն մարդիկ գթութեան, որ միշտ կը մխիթարէ, թէ և չկարենայ ալ ձեռնտու ըլլալ :

Մառի մը իւրաքանչիւր կանաչ տերև՝ գիտունին աչքին գրքի թերթ մ'է՝ որ ստեղծողն էութիւնը կը սորվեցընէ :

Ով գու որ քաղցր քուն մը կրնաս վայելել, մըտածէ զանոնք, որոնց քունը կ'արգիլեն ցաւք : Ով գու որ կրնաս քալել արագութեամբ, գթայ ընկերոջ վրայ որ չի կրնար քեզի հետևիլ և գու որ մեծատուն ես՝ մտածէ զանիկայ որ խեղճութեամբ կ'ընկճի :

Նարա-Մունի այցելութեան ելաւ Ասպահանի ալ, և անոր շիջեալ պայծառութեանը վրայ զարմանալէն վերջը, Դէհրան գնաց, տէրութեան այժմեան մայրաքաղաքը : Տեսաւ հոն որ ժողովուրդն իր տգիտութեանը և աղքատութեանը դէմ ջանալով, դէպ իսկական լաութեան կը դիմէր . շնորհիւ Եւրոպացւոց, որոնք անգաղար խորհրդատու են գահաժառանգին, և իրենց գիտութեամբը կ'առաջնորդեն անոր : Անկէց քանի մը բեղուն բայց քիչ մշակուած նահանգներէն անցնելով՝ Հիւրմիւզի ծոցը գնաց, ուսկից նաւ մտաւ Արաբիա երթալու համար, հիանալով պտղատու պարտէզներուն վրայ, որոնց մէջէն տկար թուփ մը (խահուէ) քանի մը դար կայ, բոլոր աշխարհիս վաճա-